ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Արսեն Հակոբյանը, Կարեն Ղազարյանը, Ֆիրդուս Զաքարյանը, Լուսինե Աղախանյանը, Կարո Կարապետյանը, Սամվել Մալխասյանը, Արմեն Խաչատրյանը, Ավագ Վարդանյանը, Հովհաննես Հարությունյանը, Ռոբերտ Զեյնալյանը, Հրաչիկ Սարգսյանը, Արթուր Ստեփանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Կարեն Քենդրջյան, Բաբկեն Բաբայան, Արմեն Բաղդասարյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ասլան Ավետիսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արթուր Մուսիկյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել նիստի հետևյալ օրակարգը.
1)Արարատ համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 8 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2)«ԿՐԱՔԱՐ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
3)«ԿՐԱՔԱՐ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի հարակից տարածքների օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
4)«ՔԱՐԱՊԱՐ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ուրցի քվարցիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
5)«ՍԱՆ ՓԱՈՒՐԵՐ ՍՈԼԱՐ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Արմաշի ավազների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին նախնական

համաձայնություն տալու մասին:
6)«ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Մուլտի Գրուպ առանձնացված տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
7)«ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի առանձնացված տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
8)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2025թվականի մարտի 14-ի թիվ 28-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:
9)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման արդյունքների մասին:
10)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
11)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերի հոդվածներում փոփոխություն կատարելու մասին:
12)«Արարատ համայնքի Երասխ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում ավագ խումբ բացելու և Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 218-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
13)Արարատ համայնքի ավագանու 2023թվականի դեկտեմբերի 06-ի N 212-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:
14)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:
15)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը համաձայնություն տալու մասին:
16)Արարտ համայնքի Զանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 03-043-0170-0047 կադաստրային ծածկագիրը կրող 72,4հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին:
17)Արարատ համայնքի Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-015-0450-0053 կադաստրային ծածկագիրը կրող 2 հա մակերեսով հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին:
18)Արարատի մարզի Արարատ համայնքի վարչական տարածքի գյուղ Արարատ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող և քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասերի փոխանակության մասին:
19)Արարատ համայնքի գյուղ Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
20)Արարատ համայնքի Արմաշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին:
21)Արարատ համայնքի Արարատ քաղաքի 24 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-002-0039-0207 կադաստրային ծածակագիրը կրող 0.8182հա մակերեսով հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին:
22)27.05.2009 թվականին կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին 908 պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին:
23)15.08.2019 թվականին կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին 3137 պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին:
24)17.11.2010 թվականին կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին 2564 պայմանագրի ժամկետը երկարաձգելու

մասին:
25)«Պարույր Սևակ տուն թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ֆինանսական աջակցություն հատկացնելու թույլտվություն տալու մասին:
26)Արարատ համայնքի Արարատ քաղաքի 23 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-002-0039-0205 կադաստրային ծածկագիրը կրող 0.2 հա մակերեսով հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին:
27)Արարատ համայնքի Արարատ քաղաքային բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
28)Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման հանձնելու մասին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 72-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԿՐԱՔԱՐ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏԻ ՏՐԱՎԵՐՏԻՆՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 6-ին Արարատ համայնքում «ԿՐԱՔԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «ԿՐԱՔԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 73-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԿՐԱՔԱՐ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏԻ ՏՐԱՎԵՐՏԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՎԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 6-ին Արարատ համայնքում «ԿՐԱՔԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «ԿՐԱՔԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի

հարակից տարածքների օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 74-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՔԱՐԱՊԱՐ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՐՑԻ ՔՎԱՐՑԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 6-ին Արարատ համայնքում «ՔԱՐԱՊԱՐ » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը,***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «ՔԱՐԱՊԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող Ուրցի քվարցիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 75-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՍԱՆ ՓԱՈՒՐԵՐ ՍՈԼԱՐ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՇԻ ԱՎԱԶՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 19-ին Արարատ համայնքում «ՍԱՆ ՓԱՈՒՐԵՐ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը,***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «ՍԱՆ ՓԱՈՒՐԵՐ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Արմաշի ավազների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 76-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏԻ ՏՐԱՎԵՐՏԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՎԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՄՈՒԼՏԻ ԳՐՈՒՊ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 28-ին Արարատ համայնքում «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Մուլտի Գրուպ առանձնացված տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 77-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏԻ ՏՐԱՎԵՐՏԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՎԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 28-ին Արարատ համայնքում «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի առանձնացված տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 78-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 28-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 67-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Արարատ համայնքի ավագանու 2025թվականի մարտի 14-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 215-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 28-Ա որոշման Հավելված 2-ում կատարել հետևյալ լրացում՝

1.1 «Հայեցողական պաշտոններ» բաժնում ավելացնել ավագանու խմբակցության փորձագետի 1 /

մեկ/ հաստիք՝ դրույքաչափը սահմանելով 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ.
1.2 «Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ» բաժնում ավելացնել խմբակցության գործավարի 2 /երկու/ հաստիք՝ դրույքաչափը սահմանելով 150 000-ական /մեկ հարյուր հիսուն հազարական/ ՀՀ դրամ:
2.Հաստատել 2025թվականի համար Հայաստանի Հանրապետության Արարատի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն կից հավելված 2-ի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 79-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը՝
ա/ եկամուտների կատարման գծով՝ համաձայն հավելված 1-ի,
բ/ ծախսերի կատարման գծով՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 80-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27-րդ հոդվածի և 31-րդ հոդվածի 1.8-րդ մասի դրույթներով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N 1 - N 4 հավելվածների:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 81-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 258-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն որոշմամբ հաստատված թիվ 1,2,3, 4 հավելվածների:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 82-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՍԽ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՎԱԳ ԽՈՒՄԲ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 218-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1. 2025 թվականի հոկտեմբերի 1-ից թույլատրել «Արարատ համայնքի Երասխ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում բացել ավագ խումբ:
2. Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 12-ի «Արարատ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը 2025 թվականի համար հաստատելու մասին» N 218-Ա որոշման Հավելված 9-ում ավելացնել դաստիարակի և դաստիարակի օգնականի 1-ական հաստիք՝ ըստ սահմանված դրույքաչափերի:
3.Հաստատել «Արարատ համայնքի Երասխ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակը՝ համաձայն կից Հավելված 9-ի:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2025 թվականի հոկտեմբերի 1-ից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 83-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 212-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 10.07.2025թ.-ի «ՀՀ

կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N 921-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 06-ի «ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 212-Ա որոշումը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 84-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի հոկտեմբերի 23-ի «Հողամասերի պետական հաշվառման կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝ Արարատ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմած Արարատ համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն 22 և 22ա ձևաչափերի:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 85-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման կարգը հաստատելու մասին» N 431-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ և 13-րդ կետերի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Արարատ համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը՝ հանձայն կից ներկայացված հավելվածի:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 86-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՆԳԱԿԱՏՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-043-0170-0047 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 72.4 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՉԵԿ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Չանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող,պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության /ծածկագիր 03-043-0170-0047/ 72.4 հա արոտավայրը ենթակա է մրցույթով վարձակալության տրամադրելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ և 76-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն մրցութային կարգով 10 տարի ժամկետով տրամադրել վարձակալությամբ Արարատ համայնքի Չանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող,պետական սեփականություն հանդիսացող 03-043-0170-0047 կադաստրային ծածկագիրը կրող 72.4 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը:
2.Նշված հողատարածքի վարձավճարի մեկնարկային գին սահմանել -------- ՀՀ դրամ 1 հա-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով,մասնակցության վճար՝5000 ՀՀ դրամ,մրցութային քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ մրցույթի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 87-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-015-0450-0053 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 2 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՉԵԿ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի գ.Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտետական նշանակության /ծածկագիր 03-015-0450-0053/ 2 հա մակերեսով խոտհարք հողամասը ենթակա է մրցույթով վարձակալության տրամադրելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ և 76-րդ հոդվածների պահանջներով,հաշվի առնելով Արարատ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 21-ի«Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող,արդյունաբերական ընդերքօգտագործան և այլ արտադրական նշանակության հողերի համար տարեկան վարձավճարի չափ սահմանելու մասին» թիվ 49 որոշումը, առաջնորդվելով համայնքի ավագանու կանոնակարգով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1.Մրցութային կարգով, 25 տարի ժամկետով տրամադրել վարձակալությամբ Արարատ համայնքի գ.Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 03-015-0450-0053 կադաստրային ծածկագիրը կրող 2 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողամաս:

2.Նշված հողատարածքի վարձավճարի մեկնարկային գին սահմանել ------- ՀՀ դրամ, նախավճար սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, մրցութային քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ մրցույթի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 88-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳՅՈՒՂ ԱՐԱՐԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Հիմք ընդունելով քաղաքացի Վարդան Եղիազարյանի սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասը համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելու վերաբերյալ դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով,***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1.Համայնքային սեփականություն համարվող հողամասը Վարդան Եղիազարյանին տրամադրել՝ իր հողամասերի հետ միավորելու և հողամասերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
2.Փոխարենը, Վարդան Եղիազարյանից իր դիմումի համաձայն վերցնել հողամաս և ճանաչել որպես համայնքային սեփականություն՝ հետագայում դաշտամիջյան ճանապարհ օգտագործելու նպատակով:
3.Համայնքի ղեկավարին՝ փոխանակման հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 89-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԱՐԱՐԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները

համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 28-ի թիվ 2/փ-231 դրական եզրակացությունը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Արարատ համայնքի գյուղ Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,պետական սեփականություն հանդիսացող, 03-015-0556-0001 կադաստրային ծածկագրից 1.27464 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ արոտավայր հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել՝ հատուկ նշանակության հողերի:
2.Վերոնշյալ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում հողամասի նկատմամբ փոփոխված նպատակային նշանակությամբ իրավունքը պետական գրանցում ստանալու պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 90-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն պահանջներով և հիմք ընդունելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 26-ի թիվ 2/փ-203 դրական եզրակացությունը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Արարատ համայնքի Արմաշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող, 03-019-0102-0001 կադաստրային ծածկագրից 0.37453 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ արոտավայր հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել՝ հատուկ նշանակության հողերի:
2.Արարատ համայնքի Արմաշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող, 03-019-0102-0001 կադաստրային ծածկագրից 0.37453 հա մակերեսով հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:
3.Վերոնշյալ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում հողամասի նկատմամբ փոփոխված նպատակային նշանակությամբ իրավունքը պետական գրանցում ստանալու պահից:
4.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման 2-րդ կետից բխող նվիրաբերության պայմանագրի կնքման աշխատանքների կատարումը

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 91-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-002-0039-0207 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.8182 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Արարատ քաղաքի 24 հասցեում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության /ծածկագիր 03-002-0039-0207 / 0.8182 հա մակերեսով հողամասը ենթակա է մրցույթով վարձակալության տրամադրելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ և 76-րդ հոդվածների պահանջներով,հաշվի առնելով Արարատ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 21-ի«Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող,արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի համար տարեկան վարձավճարի չափ սահմանելու մասին» թիվ 49 որոշումը,առաջնորդվելով համայնքի ավագանու կանոնակարգով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1.Մրցութային կարգով, 99 տարի ժամկետով տրամադրել վարձակալությամբ Արարատ համայնքի Արարատ քաղաքի 24 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 03-002-0039-0207 կադաստրային ծածկագիրը կրող 0.8182 հա մակերեսով արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը:
2.Նշված հողատարածքի վարձավճարի մեկնարկային գին սահմանել ------- ՀՀ դրամ, նախավճար սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, մրցութային քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ մրցույթի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 92-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

27.05.2009ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 908 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՉԱՔԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ և 94-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով 27.05.2009 թվականին կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին թիվ 908 պայմանագրի (վկայականներ՝ թիվ 0138782, թիվ 0138783, թիվ 0138784) 7.1 կետը և հաշվի առնելով վարձակալ Գուրգեն Սամվելի Ավագյանի դիմումը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Երկարաձգել 27.05.2009 թվականին կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին թիվ 908 պայմանագրի ժամկետը մինչև 2034 թվականի մայիսի 27-ը:
2.Համայնքի ղեկավարին՝ կնքել համաձայնագիր Գուրգեն Սամվելի Ավագյանի հետ՝ 27.05. 2009 թվականի կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին թիվ 908 պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ՝ մյուս պայմանները թողնելով անփոփոխ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 93-Ա)*

ԼՍԵՑԻՆ

15.08.2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 3137 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ԶԱՔԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ և 94-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով 15.08.2019 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության թիվ 3137 պայմանագրի (վկայական՝ թիվ 21082019-03-0103) 18-րդ կետը և հաշվի առնելով վարձակալ Արթուր Անուշավանի Գասպարյանի դիմումը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Երկարաձգել 15.08.2019 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության թիվ 3137 պայմանագրի ժամկետը մինչև 2044 թվականի օգոստոսի 15-ը:
2.Համայնքի ղեկավարին՝ կնքել համաձայնագիր Արթուր Անուշավանի Գասպարյան հետ՝ 15.08. 2019 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության թիվ 3137 պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ՝ մյուս պայմանները թողնելով անփոփոխ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 94-Ա)*

ԼՍԵՑԻՆ

17.11.2010 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 2564 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ԶԱՔԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ և 94-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով վարձակալ Գուրգեն Հովսեփի Աբրահամյանի դիմումը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Երկարաձգել 17.11.2010 թվականին կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին թիվ 2564 պայմանագրի ժամկետը մինչև 2035 թվականի նոյեմբերի 17-ը:
2.Համայնքի ղեկավարին՝ կնքել համաձայնագիր Գուրգեն Հովսեփի Աբրահամյանի հետ՝ 17.11. 2010 թվականի կնքված գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին թիվ 2564 պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ՝ մյուս պայմանները թողնելով անփոփոխ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 95-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարմանմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ, 11-րդ կետերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Արարատ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման և սոցիալական աջակցության վերաբերյալ չափորոշիչները սահմանող կարգ»-ի 4-րդ մասի պահանջը, ինչպես նաև հաշվի առնելով «Պարույր Սևակի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Սևակ Ղազարյանի դիմումը՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին «ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ հատկացնել ֆինանսական աջակցություն 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Զանգակատուն գյուղի տոնին նվիրված «ԶԱՆԳԱԿԱՏՈՆ» խորագրով փառատոնը կազմակերպելու համար:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 96-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-002-0039-0205 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.2 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Արարատ քաղաքի 23 հասցեում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության /ծածկագիր 03-002-0039-0205/ 0.2 հա մակերեսով հողամասը ենթակա է մրցույթով վարձակալության տրամադրելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ և 76-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1.Մրցութային կարգով, 99 տարի ժամկետով տրամադրել վարձակալությամբ Արարատ համայնքի Արարատ քաղաքի 23 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 03-002-0039-0205 կադաստրային ծածկագիրը կրող 0.2 հա մակերեսով արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը:
2.Նշված հողատարածքի վարձավճարի մեկնարկային գին սահմանել ------- ՀՀ դրամ, նախավճար սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, մրցութային քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ մրցույթի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 97-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն պահանջներով և հիմք ընդունելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 10.06.2025թ. թիվ 2/փ -170 դրական եզրակացությունը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Արարատ համայնքի Արարատ քաղաքային բնակավայրի վարչական տարածքում գտնվող,համայնքային սեփականություն հանդիսացող, 03-002-0010-0093 կադաստրային ծածկագիրը կրող 0.00198 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողերից փոխել՝ էներգետիկայի ,կապի,տրանսպորտի,կոմունալ ենթակառուցվածքների հողերի՝էլեկտրաենթակայան կառուցելու համար :
2.Վերոնշյալ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված են համարվում հողամասի նկատմամբ փոփոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալու պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 98-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՋԱՔԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Արարատ համայնքի սեփականություն հանդիսացող թիվ 25082025-03-0028 վկայականով գրանցված ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի գ.Ավշար բնակավայրի Նալբանդյան, Աբովյան, Մ.Մաշտոցի,Իսահակյան փողոցների գազատար խողովակաշարերն ու հենասյունները անհատույց օգտագործման հանձնել «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության Արարատի ԳԳՄ-ի շահագործմանը:
2.Համայնքի ղեկավարին՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության հետ կնքել անժամկետ, անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 99-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 71-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով և հիմք ընդունելով համայնքի ավագանու անդամ Անի Արգամի Առաքելյանի ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու և Մարինե Զավենի Մարգարյանի ավագանու անդամի մանդատը ստանալու մասին թիվ 13 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի

2025թվականի հունիսի 27-ի N 55 արձանագրությունը. ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2025թվականի հունիսի 20-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 3 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 71-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն՝
1) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «Անի Առաքելյան» բառակապակցությունը փոխարինել «Մարինե Մարգարյան» բառակապակցությամբ և ասյուհետ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«1.4 Իրավական, առողջապահության, խնամակալության եվ հոգաբարձության հարցերի մշտական գործող հանձնաժողով.
Ասպրամ Խաչատրյան
Մարինե Մարգարյան
Ռիմա Հարությունյան
Գեղամ Սինանյան»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 100-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱԴԱՄՅԱՆ

ԱՍՊՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼԱՐԻՍԱ ԹՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌԻՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՂԱՄ ՍԻՆԱՆՅԱՆ

ՍԵՐԳՈ ՄԻՆԱՍՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԵՂԱՄ ԲՈՅՄՈՒՇԱԿՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արթուր Մուսիկյանը